ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հիմնադրման» մասին

«Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ»-ը (CARMAC-II ծրագիր)- կողմ 1, «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ն (ՌԶԳ)/(SDA) (բոլոր համապատասխան ծրագրերով) կողմ 2, և «Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն»-ը (ԳՄՀԸ)/(GIZ) («Կենսաբազմազանության ինտեգրված կառավարում, Հարավային Կովկաս» ծրագիր) կողմ 3, այսուհետ՝ Կողմեր՝

առաջնորդվելով ոլորտում առկա խնդիրների լուծման գործընթացը համագործակցությամբ համակարգելու՝ աջակցելով ՀՀ համայնքներում բնական կերհանդակների կառավարման գործընթացի բարելավմանը,

հաշվի առնելով բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարման ոլորտում **Կողմերի**, ինչպես նաև վերջին տարիներին ՀՀ համայնքների զարգացմանն ուղղված բազմաթիվ ծրագրերի իրականացումը,

ընդունելով, որ հասունացել է գործընկերների միջև ուղղորդված համագործակցության և կապերի առավել հզորացման անհրաժեշտությունը,

հիմք ընդունելով բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կառավարման ոլորտում ծրագրեր իրականացնող կազմակերպությունների միջև արդյունավետ համագործակցության խթանման և ծրագրային գործողությունների համակարգման կարևորությունը,

նշելով անասնապահության ոլորտում իրականացվող ծրագրերի և ներդրումների կենսունակության ապահովման անհրաժեշտությունը,

նպաստելով համայնքների տնտեսական հնարավորությունների ընդլայնմանն ու անասնապահությամբ զբաղվող տնտեսավարողների անասնաբուծական արտադրանքից ստացվող եկամուտների աճին՝

Կողմերը համաձայնեցին հիմնել

ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակ:

1. Կողմերը մտադիր են համագործակցություն իրականացնել իրենց իրավասության սահմաններում հետևյալ ուղղություններով.

- Ծրագրային գործողությունների համակարգում՝ տեղեկատվության ու փորձի փոխանակում, աշխատանքների պլանավորում
- Հնարավոր համագործակցային ոլորտների բացահայտում

- Համատեղ ծրագրերի իրականացում
- Առաջարկությունների ներկայացում շահագրգիռ գերատեսչություններին, ոլորտը կանոնակարգող օրենսդրական և գերատեսչական ակտերը, բաց կամ անկատար օրենքները և որոշումները լրացնելու կամ փոփոխելու, ինչպես նաև համապատասխան հայեցակարգերի մշակելու և ընդունելու վերաբերյալ:

2. Սույն Հուշագրի 1-ին կետում նշված ուղղություններով համագործակցությունն իրականացվում է հետևյալ եղանակով՝

Կողմ 1. *Ստանձնելու է հարթակի գործունեության ընդհանուր համակարգումը, պետական գերատեսչությունների՝ նախարարությունների հետ հարթակի շրջանակում մշակված հայեցակարգային դրույթների քննարկումն ու ոլորտի վերաբերյալ գործող օրենսդրության, որոշումների բարելավմանն ուղղված առաջարկություններով պետական քաղաքականության ձևավորումը:*

Կողմ 2. *Աջակցելու է հարթակի ձևավորմանն ու կայացմանը, ստանձնելու է քարտուղարության դերակատարումը՝ կազմակերպչական աշխատանքներ կատարելու, ապահովելու անդամ կազմակերպությունների կապը, համակարգելու ուղղորդված համագործակցության միջամտություններն ու որոշումներով ամրագրված դրույթները:*

Կողմ 3. *Աջակցելու է միջազգային և տեղական կառույցների ու պետական գերատեսչությունների հետ տարվող աշխատանքների համակարգմանը, հարթակի շրջանակներում իրականացվող գործառույթներին և կարողությունների զարգացմանը:*

3. Սույն Հուշագրի իրականացման առանձին հարցեր կարող են քննարկվել Կողմերի ներկայացուցիչներից ձևավորված աշխատանքային խմբերի շրջանակներում:

4. Սույն Հուշագրի իրականացման հարցերի վերաբերյալ համատեղ միջոցառումներն իրականացնելիս, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում առանձին դրանց անցկացման պայմանները և կարգը որոշում են Կողմերը: Կողմերն անհրաժեշտության դեպքում կնքում են համապատասխան համաձայնագրեր:

5. Կողմերը փոխգործակցում են միմյանց հետ ներկայացուցիչների միջոցով, որոնք առաջացող հարցերը քննարկելու և համատեղ գործողություններ իրականացնելու համար լիազորված են Կողմերի կողմից:

6. Կողմերը մտադիր են տարեկան առնվազն **2** անգամ խորհրդակցություններ անցկացնել՝ համատեղ գործունեության ընթացքը քննարկելու և հետագա համագործակցության ուղղությունները որոշելու համար:

7. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ սույն Հուշագրում համապատասխան արձանագրություն ստորագրելու միջոցով կարող են կատարվել փոփոխություններ:

8. Սույն Հուշագիրը Կողմերի վրա ֆինանսական պարտավորություններ չի դնում:

9. Սույն Հուշագիրը կիրառվում է դրա ստորագրման ամսաթվից:

10. Կողմերից յուրաքանչյուրն իրավունքունի դադարեցնելու սույն Հուշագրի կիրառումը մյուս Կողմին համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով: Սույն Հուշագրի կիրառումը դադարեցվում է մյուս Կողմի կողմից՝ այդպիսի ծանուցում ստանալու ամսաթվից:

11. Սույն Հուշագրին, ցանկացած պահի կարող է միանալ վերոհիշյալ ոլորտում գործող ցանկացած շահագրգիռ կազմակերպություն, լրացուցիչ համաձայնագրով՝ որպես գործընկեր կամ հենց Կողմ:

Ստորագրված է Երևան քաղաքում, 2018 թվականի հուլիսի «17»-ին, երեքական օրինակից՝ հայերեն և անգլերեն լեզուներով, յուրաքանչյուր Կողմին՝ մեկական հայերեն և անգլերեն օրինակ:

Կողմ 1

ԳՋՀ Ծրագրերի զարգացման և կառավարման տնօրեն ---------- Գեորգի Խաչատրյան

Կողմ 2

ՌՋԳ ՀԿ նախագահ ---------- Մկրտիչ Այվազյան

Կողմ 3

ԳՄՀԸ ԿԻԿ ծրագրի տարածաշրջանային ղեկավար ---------- Հանս-Յոախիմ Լիպ

«ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հիմնադրման» մասին, կնքված առ 17.08.2018թ.

ՀՈՒՇԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ №1/1

Համաձայն ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հուշագրի 11-րդ կետի, սույն հավելվածը փաստում է հետևյալը՝ ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնը, համաձայն կենտրոնի ղեկավարի դիմումի, ցանկություն է հայտնում միանալ ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հուշագրին որպես գործընկեր՝ ընդունելով համագործակցության ուղղությունները և դրանց իրականացման եղանակները.

Որի համար ստորագրում է՝

ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի
գիտաուսումնական կենտրոնի
ղեկավար՝ _____ Ա.Իսկոյան

Տ.Տ.

Սույն հավելվածը հանդիսանում է ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հուշագրի անբաժանելի մասը:

„22„ 10 2018թ

Համակարգման հարթակի
քարտուղարություն

«ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հիմնադրման» մասին, կնքված առ 17.08.2018թ.

ՀՈՒՇԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ №1/2

Համաձայն ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հուշագրի 11-րդ կետի, սույն հավելվածը փաստում է հետևյալը՝ ՛՛Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն՛՛ հիմնադրամը, համաձայն հիմնադրամի տնօրենի դիմումի, ցանկություն է հայտնում միանալ ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հուշագրին որպես գործընկեր՝ ընդունելով համագործակցության ուղղությունները և դրանց իրականացման եղանակները.

Որի համար ստորագրում է՝

՛՛Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն՛՛
հիմնադրամի տնօրեն՝ _____ Գ. Սարդարյան

Կ.Տ.

Սույն հավելվածը հանդիսանում է ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հուշագրի անբաժանելի մասը:

„22„ 10 2018թ

Համակարգման հարթակի
քարտուղարություն

«ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հիմնադրման» մասին, կնքված առ 17.08.2018թ.

ՀՈՒՇԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ №1/3

Համաձայն ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հուշագրի 11-րդ կետի, սույն հավելվածը փաստում է հետևյալը՝

″ՄԱԶԾ հողերի և անտառների կայուն կառավարման ներդնումը Հայաստանի հյուսիս արևելյան լեռնային լանդշաֆտներում″ ծրագիրը, համաձայն ծրագրի տեխնիկական առաջադրանքի ղեկավարի դիմումի, ցանկություն է հայտնում միանալ ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հուշագրին որպես գործընկեր՝ ընդունելով համագործակցության ուղղությունները և դրանց իրականացման եղանակները.

Որի համար ստորագրում է՝

ՄԱԶԾ մշտական
ներկայացուցչի տեղակալ՝ _____ Դ. Մարյասին Կ.Տ.

Սույն հավելվածը հանդիսանում է ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հուշագրի անբաժանելի մասը:

„22" 10 2018թ

Համակարգման հարթակի
քարտուղարություն

Translated from Armenian

MEMORANDUM on the establishment of a platform to coordinate projects aiming at sustainable management of RA natural grasslands - pastures and haylands, 17 August 2018

ANNEX 1/3

Pursuant to paragraph 11 of the Memorandum on the establishment of a platform to coordinate projects aiming at sustainable management of RA natural grasslands - pastures and haylands, this Annex is about the following:

The UNDP "Mainstreaming Sustainable Land and Forest Management in Mountain Landscapes of North-Eastern Armenia" project, as per the request of the Technical Task Leader, wishes to join the Memorandum on the establishment of a platform to coordinate projects aiming at sustainable management of RA Natural grasslands - pastures and haylands, as a partner. The project hereby accepts the avenues for cooperation and their implementation methods.

Signature

Dmitry Mariyasin

UNDP Deputy Resident Representative

This Annex is an integral part of the MEMORANDUM on the establishment of a platform to coordinate projects aiming at sustainable management of RA Natural grasslands - pastures and haylands.

22 October 2018

Secretariat of the Coordination Platform

«ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հիմնադրման» մասին, կնքված առ 17.08.2018թ.

ՀՈՒՇԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ №1/4

Համաձայն ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հուշագրի 11-րդ կետի, սույն հավելվածը փաստում է հետևյալը՝

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը, համաձայն ռեկտորի դիմումի, ցանկություն է հայտնում միանալ ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հուշագրին՝ որպես գործընկեր՝ ընդունելով համագործակցության ուղղությունները և դրանց իրականացման եղանակները, որի համար ստորագրում է՝

Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանի

ռեկտոր _____ Վ. Ուռուտյան Կ.Տ.

Սույն հավելվածը հանդիսանում է ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հուշագրի անբաժանելի մասը:

«29» 04 2019թ

Համակարգման հարթակի քարտուղարություն

«ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հիմնադրման» մասին, կնքված առ 17.08.2018թ.

ՀՈՒՇԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ №1/5

Համաձայն ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հուշագրի 11-րդ կետի, սույն հավելվածը փաստում է հետևյալը՝

«Անասնաբույժների ազգային ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, համաձայն կազմակերպության նախագահի դիմումի, ցանկություն է հայտնում միանալ ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հուշագրին, որպես գործընկեր՝ ընդունելով համագործակցության ուղղությունները և դրանց իրականացման եղանակները.

Որի համար ստորագրում է՝

«Անասնաբույժների ազգային ասոցիացիա» հասարակական կազմակերպության

նախագահ՝ _____ Ա. Օհանյան Կ.Տ.

Սույն հավելվածը հանդիսանում է ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հուշագրի անբաժանելի մասը:

„20„ 11 2019թ

Համակարգման հարթակի քարտուղարություն